

## **Բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման նոր մոդել**

Նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնության և սպասարկման որակը, այն համահունչ դարձնելով միջազգայնորեն ընդունված չափանիշներին, ՀՀ Առողջապահության նախարարությունը ներդրել է բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման նոր մոդել:

Այսուհետ մասնագիտական գործունեության իրավունք ձեռք բերելու համար ավագ և միջին բուժաշխատողները պետք է անցնեն հավաստագրման գործընթաց:

Հավաստագրումն իրենից ներկայացնում է շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) արդյունքների գնահատման և ՇՄԶ հավաստագրի տրամադրման կամ մերժման ընթացակարգ:

ՇՄԶ հավաստագիրը բուժաշխատողի ինքնուրույն մասնագիտական գործունեությունը շարունակելու թույլտվությունն է, որը տրվում է վերջին հինգ տարիների ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու և օրենքով սահմանված կարգով ՇՄԶ կրեդիտների նվազագույն քանակը հավաքելու դեպքում: Կրեդիտը ՇՄԶ գործընթացի բեռնվածության չափման պայմանական միավոր է:

Հավաստագրումն իրականացվելու է հնգամյա շրջափուլով, որի ընթացքում ավագ բուժաշխատողները պարտավոր են հավաքել 220 ՇՄԶ կրեդիտ, բացառությամբ դեղագետների, որոնց համար՝ որպես ՇՄԶ կրեդիտների ընդհանուր նվազագույն քանակ սահմանված է 160 կրեդիտը: Միջին բուժաշխատողների համար պարտադիր է առնվազն 140 ՇՄԶ կրեդիտի առկայությունը, բացառությամբ դեղագործների, որոնց համար պարտադիր է առնվազն 100 ՇՄԶ կրեդիտը:

Եթե բուժաշխատողը չունի բավարարող աշխատանքային ստաժը կամ չի հավաքել ՇՄԶ կրեդիտների պահանջվող նվազագույն քանակը, ապա նրան տրվում է վերապահումով հավաստագիր: Վերջինս բուժաշխատողի ոչ ինքնուրույն, հսկողության ներքո մասնագիտական գործունեություն իրականացնելու թույլտվություն է: Վերապահումով հավաստագիրը տրվում է չբավարարող մասնագիտական աշխատանքային ստաժը կամ չբավարարող ՇՄԶ կրեդիտները լրացնելու պայմանով:

ՇՄՁ կրեդիտները, ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված չափաքանակներին համապատասխան, պետք է լրացվեն գործունեության հետևյալ 3 տեսակներից՝

1. Տեսական գիտելիքների զարգացում,
2. Գործնական հմտությունների զարգացում և
3. Ինքնակրթություն և ինքնազարգացում:

Տեսական կրեդիտներ կարելի է հավաքել ՇՄՁ տարբեր միջոցառումներին (գիտաժողով, համագումար, սեմինար, վերապատրաստման դասընթաց, սիմպոզիում և այլն) մասնակցության և/կամ իրականացման, գիտական աշխատանքների հրատարակման, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանության և/կամ նշված աշխատանքների ղեկավարման, իրականացված դասախոսական աշխատանքի համար և այլն: Գործնական կրեդիտներ կարելի է ստանալ աշխատանքային տեղում մասնագիտական կատարելագործման գիտագործնական միջոցառումներին մասնակցության և/կամ իրականացման համար և այլն: Ինքնակրթության և ինքնազարգացման հարթակում կրեդիտներ կարելի է ստանալ հեռավար կամ առցանց դասընթացներին մասնակցության և/կամ դրանց իրականացման, ինչպես նաև գիտական աշխատանքների, աշխատությունների հրատարակման և/կամ գործնական ուսումնասիրությունների արդյունքների ներկայացման միջոցով:

Այն բուժաշխատողները, ովքեր առաջին անգամ պետք է սկսեն իրենց մասնագիտական գործունեությունը հավաստագիր կարող են ստանալ, եթե մասնագիտական գործունեությունը սկսել են ոչ ուշ, քան համապատասխան բժշկական ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո երկու տարվա ընթացքում:

Նշված գործընթացներն իրականացնելու նպատակով ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտում ստեղծվել է Մասնագիտական գործունեության հավաստագրման ազգային կենտրոն (ՄԳՀԱԿ), որի հիմնական գործառույթներն են՝

- հավաստագրման գործընթացի իրականացում,
- ՇՄՁ միջոցառումների կրեդիտավորում,

- բուժաշխատողների անվանական ռեգիստրի վարում, որի արդյունքում կստեղծվի առողջապահության ոլորտում առկա կադրային ներուժի վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազա:

Հավելենք նաև, որ հավաստագրման գործընթացի հետ կապված առաջին վարչական տույժերը կիրառվելու են 2021 թվականի հունվարից:

Շարունակելի